

Ասոր կը յաջորդէ ժամանակագրական կարգով Մովսէս Խորենացի քերթողահայր Պատմահօր հանդիպումը Առաքելոց գերեզմանին ի Հոռոմ շուրջ 440 թուականին:

Պատմահօր Հոռոմ իյնալը՝ իր վերադարձի ուղեւորութեան ատենն է:

Նա իր երթին, Եղեսիայէն վերջ, կ'ըսէ. «Անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացոց հրահանգս» ուսկից կը հասնէր իր կէտ — նպատակին՝ Աղեքսանդրիա: Աղեքսանդրիայէն վերադարձին է ուրեմն որ «Նաւել յԵլլաղայ կամելով, յիտալիա բռնութեամբ անկաք հողմոց. և ողջունեալ ի հակդիստ սրբոցն Պետրոսի և Պօղոսի, ոչ բազում ի Հոռովմայեցոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլաղա յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս: Եւ ի կատարման ձմերայնոյն՝ դէմ եղեալ ի Բիւզանդիոն ելանել, փափաքելով մերոց հայրենեացն»:

Անշուշտ չէինք կրնար պահանջել որ իր հոյակապ էջերուն մէջ՝ որոնք քանի մը հազար դարերու պատմութեան ամփոփոյցն են՝ մեզի մանրամասնութիւններ տար հայկական յուշերուն:

Ինչպէս կանխաւ ըսինք, գլխաւոր Առաքելոց մեծ ուխտավայրին քով հայերն ունեցած են հնուց մատուռ և հոգետուն կամ ուխտաւորներու օթարան. ասորը հարկն զգացած էին մեր նախնիք և բարերարներու ձեռքով նուիրագործած այդպիսի վայրեր, քաջալերելու հաւատացեալներու բարեպաշտութիւնը ի յարգութիւն սրբոց շիրիմներուն:

Ս. Պետրոսի գերեզմանին մօտ այսպիսի նուիրական տեղոյ մը գոյութիւնը անձանօթ չէ. և անոր մասին կը վկայեն նաեւ երեւելի հնախօսներ, ինչպէս Արմեւլիւնի՝ և ուրիշներ: Այդ հոգետունը Ս. Յակոբ կը կոչուէր, և մատուռը Աստուածամօր նշարութեամբ, ուր կայիւ հայ քահանայներ իրենց ընտանիքով, անշուշտ առաջնորդելու և

ուխտաւորներու հոգետր պէտքերն հոգալու Ս. Խորհրդոց մատակարարութեամբ, ինչպէս կը վկայէ ԺՅ դարուն թորինի Անանուն Հոռոմի տեղեկագիրը. որուն գարմանք ազդած է քահանաներու ամուսնական վիճակը՝ իրենց մէջ վաղուց վերցուած ըլլալով այդ ազատութիւնը որ կայ և կը տեսէ դեռ Արեւելքի բոլոր ծէսերուն մէջ:

Այդ հոգետունն և մատուռը սակայն ճակատագրական տեղ մը գրաւած էին Ս. Պետրոսի մեծափառ տաճարին զաւթին ձախակողմը. վերջինիս շինութեան թուականին, 1450, բոլոր մերձաւոր մատուռներուն և հիւրանոցներուն հետ հայոցն ալ կը վերցուէր: Այդ վաղեմի սրբավայրէն միակ յիշատակ մը կ'երեւի ցարդ Լատերանեան թանգարանին մէջ, որու մասին պիտի անդրադառնանք, երբ յաջորդով մեր ընթերցողներուն տանք կարգ մը հայկական տապանագրեր, որոնք երկար տեղափոխութենէ վերջ՝ հուսկ կը հանգչին Հոռոմի Լեոնեան հայ կղերանոցի Ս. Նիկողոս թողնութիւնացի կոչուած գեղեցիկ եկեղեցոյն մէջ և մէկ քանին ալ Ս. Վլաս եկեղեցոյն մէջ, որ այժմ հայոց կը վերաբերի և ունի յարակից հոգետուն մը կամ հիւրանոց՝ Ս. Քահանայապետներէն շնորհուած, հայ ուխտաւորներուն բարեպաշտութեան սատար:

Եթէ Ս. Աստուածածին մատուռն և կամ Ս. Յակոբ հոգետունն իրենց գոյութիւնը հնութեան մէջ անորոշ կերպով կը կորսնցնեն, անդին Ս. Պօղոսի շիրմին քով լաւ եւս նահատակութեան տեղոյն վրայ պատկառելի թուականով հայկական հնութիւններ կան, վանքերու հետքեր, որոնցմէ բարեբախտօրէն նշմարներ յայտնուեցան անցեալ դարու կէսին: Յաջորդով կու տանք արձանագրութիւններ, կը խօսինք այդ յիշատակարաններուն վրայ որոնք մինչեւ Քրիստոսի 650 թուականը կ'եւլեն:

Հ. ԵՂՈՒ ՓԷՏՐՈՍՅԱՆ

1. Տե՛ս իր երկը Le chiese di Roma. 1891. էջ 769.